ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղար

ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հաշվետվություն

2026 թ. մայիս-հուլիս ամիսներին կատարված աշխատանքների

ԿԳՄՍ նախարարության նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունում որպես փորձագետ հաշվետու ժամանակահատվածում՝

1. Ուսումնասիրել եմ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում հուշարձանների տարածքների և պահպանական գոտիների սահմաններում հողամասերի նպատակային նշանակությանն առնչվող փոփոխությունների հարցերը և մասնակցել դրանց վերաբերյալ կարծիքների տրամադրման աշխատանքներին:

2. Ուսումնասիրել և կարծիք եմ ներկայացրել նախարարություն ներկայացված ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ.

3. Համակարգել եմ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի ««Դամբարանադաշտ «Վերին Նավեր»», Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի «Քարայր-կացարան «Մենծ Էր», Հաղպատ բնակավայրի «Քարայր-կացարան «Լաստի Այր», Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Թեղենիք բնակավայրի «Ամրոց «Թղիթ» և Վայոց ձորի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի «Ամրոց «Քյոշկ» հուշարձանների մրցութային կարգով վարձակալությամբ օգտագործման հանձնելու հայտերի ներկայացման աշխատանքները, մասնակցել հայտերի բացման մրցութային հանձնաժողովի գործընթացին:

4. Համակարգել եմ հուշարձանների սեփականատերերից հուշարձանների պահպանական պարտավորագրերը ստանալու աշխատանքները: Ապահովել եմ խորհրդատվություն պահպանական պարտավորագրերի ներկայացման գործընթացների վերաբերյալ:

Անցած ժամանակահատվածում սեփականատերերի կողմից ներկայացվել են 804 հուշարձանի պահպանական պարտավորագրեր:

5. Մշակել եմ «Երևան քաղաքի Կոնդ թաղամասի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

6. Մասնակցել եմ հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթացներին:

7. Մասնակցել եմ նոր հայտնաբերված օբյեկտներին նորահայտ հուշարձանների կարգավիճակ տալու նպատակով նախատեսված փորձագիտական հանձնաժողովի աշխատանքներին:

8. Կատարել եմ հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, օգտագործման և տարածքների գույքային ճշտմանն առնչվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության ղեկավարության կողմից տրված այլ հանձնարարականներ:

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության վարչության փորձագետ՝ Սուրեն Շաքարյան